ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 նոյեմբերի 2026թ. թիվ 773-Ա

Տ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԾՈՎԱԿԱԼ ԻՍԱԿՈՎԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 23 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 259-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով և հաշվի առնելով Տ.Հովսեփյանի դիմումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Տաթևիկ Վրույրի Հովսեփյանին 2026 թվականի նոյեմբերի 5-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի ծովակալ Իսակովի անվան թիվ 23 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև օրենքով սահմանված կարգով «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի ծովակալ Իսակովի անվան թիվ 23 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի նշանակումը և նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2. Տ.Հովսեփյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐՍԵՆ ՂԱՐԻԲՅԱՆ
2414880046

X

2026-11-04 18:05:28 GMT+4

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Signed by: GHARIBYAN ARSEN 2414880046 Ա.ՂԱՐԻԲՅԱՆ

2026թ. նոյեմբերի 4
ք.Վանաձոր